‹‹ՄԵՂՐՈՒ ՏԲԿ›› ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ‹‹ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ›› ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՄՏԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ-21/2»

ք.Մեղրի

<< 26 >> մարտի 2021թ.

<< Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն >> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Լ. Վարդանյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Աշոտ Բեգլարյան (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **<<ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ>>** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ապրանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ապրանքը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ապրանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը ՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ապրանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ապրանքի մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ապրանքի արդյունքը, իսկ Ապրանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ապրանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ապրանքի մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ապրանքը ընդհանուր գինը կազմում է 896050 (ութ հարյուր իննսունվեց հազար հիսուն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ապրանքի մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 30-ը դեկտեմբերի 2021թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ապրանքի մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ապրանքի մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ապրանքը մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների

կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ՝	ՎԱՃԱՌՈՂ՝
"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ	Ա/Ձ Աշոտ Բեգլարյան
ՀՀ Սյունիքի մարզ,ք. Մեղրի ,Գործարարների 42	ՀՀ Մեղրի , Իսահակյան 22Ա
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ" ՓԲԸՄեղրու մ/ճ	Բանկ ‹‹Հայբիզնեսբանկ›› ՓԲԸ Ագարակի մ/ճ
Հ/Հ 16099-003354200	Հ/Հ 1150019534014044
ՀՎՀՀ 09705024	ՀՎՀՀ 78663815
էլ.փոստ agarak-hosp@mail.ru	էլ. հասցեն՝ ashotbeglaryan72@mail.ru
Հեռ. 0286-60685	Հեռ. 077-252577
Տնօրեն՝ / Լ.Վարդանյան	Ա/Ձ Աշոտ Բեգլարյան
Կ.Տ.	Digitally signed by BEGLARYAN ASHOT 1905730047 Date: 2021.04.05 14:39:41 GMT+04:00

Հավելված 1
<< 26 >> մարտի 2021թ. կնքված
N «ՄՏԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ-21/2» ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսվածմիջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	Քանակը	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Տեխնիկական բնութագիրը
1	30192122	Գրիչ	Հատ	150	200	30000	Գրիչ գնդիկավոր, պլաստմասե, թափանցիկ իրանով, փոխարինվող միջուկով ռետինե բռնակով և կափարիչով կապույտ,սև կամ կարմիր գույների :
2	39263200	Գրասենյակային գիրք	Հատ	1100	155	170500	Գրասենյակային գիրք: A4 ֆորմատի,լրագրային թղթից,խտությունը 45-50գ/ք.մ.,սպիտակությունը ոչպակաս քան 70%, 200 թերթ, միտռղանի, ամուր կազմով:
3	30192125	Ընդգծիչ	Տուփ	250	5	1250	Ընդգծիչ (մարկեր), ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից պատրաստված, ծայրոցով, տափակ ծայրով,4 գույնի:
4	30197622	Թուղթ	Կգ	1080	425	459000	Թուղթ A4 ֆորմատի: Թուղթ սպառողական ձևաչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Չափերը 210x297մմ, միատակ և երկտակ թերթերի համար, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/մ^2:
5	30197235	Թղթապանակ	Հատ	190	100	19000	Արագակար՝ պլաստիկից, առջևից թափանցիկ, A4 չափի փաստաթղթերի համար, ամրացման մետաղական

							հարմարանքով:
6	30197234	Թղթապանակ ռեգիստր	Հատ	1150	50	57500	Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կոնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար
7	30197322	Կարիչ	Հատ	1850	5	9250	Գրասենյակային կարիչ 30-ից մինչև 50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար
8	30197112	Կարիչի ասեղ	Տուփ	250	20	5000	Միջին ասեղ գրասենյակային կարիչների (ստեպլեր) համար, N 25, 24մմ/6մմ : Տուփի մեջ 1000 հատ :
9	30197111	Կարիչի ասեղ	Տուփ	180	20	3600	Փոքր ասեղ գրասենյակային կարիչների (ստեպլեր) համար, N 10 : Տուփի մեջ 1000 հատ :
10	30192130	Մատիտ	Հատ	80	120	9600	Մատիտ սովորական, ռետինով, HB:
11	30199420	Նշումների թուղթ	Հատ	320	50	16000	Նշումների թուղթ՝ ինքնասոսնձվող 76մմ x 102մմ, դեղին գույնի,100թերթ:
12	30192930	Ջնջիչ	Հատ	380	10	3800	Ջնջիչ շտրիխ գրիչատիպ 9 մլ: **«Flamingo» կամ համարժեք:**
13	24911200	Սոսինձ	Կգ	3500	1,8	6300	հեղուկ սոսինձ գրասենյակային (60գրամ), թուղթ սոսնձելու համար
14	22811150	Նոթատետր	Հատ	430	25	10750	Ա5 ֆորմատի քառակուսի 70 թերթ
15	30192111	Շտամպի բարձիկներ	Հատ	400	10	4000	Բարձիկ դրոշմակնիքի համար, իր տուփով՝ 6.5 x 8.5 սմ չափերի,/տարբեր գույների/: «HORSE» կամ համարժեք:
16	30192114	Շտամպի բարձիկի թանաք կապույտ	Հատ	400	10	4000	Թանաք շտամպի տուփի բարձիկների համար, 30մլ,/ տարբեր գույներ /:
17	39241210	Մկրատ	Հատ	700	6	4200	Մկրատ միջին, 17սմ երկարությամբ,չժանգոտող պողպատից:
18	30197220	Ամրակ	Տուփ	200	5	1000	Գրասենյակային ամրակներ (Սկրեպ), մետաղական, վինիլային ծածկույթով, 50մմ: Տուփի մեջ 100 հատ: Թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար:
19	30197120	Կոճգամ	Տուփ	340	10	3400	Գունավոր մեխիկ, պլաստմասե գլխիկով,տարբեր գույների:Տուփի մեջ:
20	30197220	Սեղմակ	Տուփ	730	10	7300	Մետաղական,թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար, լայնությունը

							30-40 մմ, արդյունավետ ամրեցնում է 60-90 թերթ
22	30193110	Էրակազմ սեղանի կոմպլեքտ	Հատ	5800	3	17400	Սեղանի կոմպլեկտ , 6 առարկա՝ 2 գրիչ, 2 մատիտ, մկրատ, քանոն, կարիչ, գրասենյակային դանակ:
23	30197231	Ֆայլ	Տուփ	1400	38	53200	Թափանցիկ պոլիէթիլենից ֆայլ, A4 չափի փաստաթղթերի համար՝ ,թափանցիկ, 90 միկրոն: **«Atlas» կամ համարժեք:**
Ընդամենը ութ հարյուր իննսունվեց հազար հիսուն ՀՀ դրամ						896050	

Նախատեսվում է գնել 2021 թ-ի ընթացքում: Յուրաքանչյուր ապրանքատեսակի նշված ծավալը առավելագույնն է, այն կարող է նվազեցվել Գնորդի կողմից: Ապրանքը մատակարավում է գնորդի կողմից ստացված պատվերից հետո 3 օրվա ընթացքում:

ԳՆՈՐԴ՝

"Մեղրու ՏԲԿ" ՓԲԸ
ՀՀ Սյունիքի մարզ,ք. Մեղրի ,Գործարարների 42
Բանկ " ՎՏԲ Հայաստան Բանկ" ՓԲԸՄեղրու մ/ճ
Հ/Հ 16099-003354200
ՀՎՀՀ 09705024
Էլ.փոստ agarak-hosp@mail.ru
Հեռ. 0286-60685

Տնօրեն՝ / / Լ.Վարդանյան

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ՝

Ա/Ձ Աշոտ Բեգլարյան
ՀՀ Մեղրի ,Իսպիակյան 22Ա
Բանկ «Գազպրոմբանկ» ՓԲԸ Վանաձորի մ/ճ
Հ/Հ 1150019534014044
ՀՎՀՀ 78663815
Էլ. հասցեն՝ ashotbeglaryan72@mail.ru
Հեռ. 077-252577

Digitally signed by BEGLARYAN ASHOT 1905730047
Date: 2021.04.05 14:41:29 GMT+04:00

Ա/Ձ Աշոտ Բեգլարյան

Կ.Տ.

Հավելված
<<_26_>> մարտի 2021թ. կնքված
N «ՄՏԲԿ-ՄԱ-ԱՊՁԲ-21/2» ծածկագրով գնման պայմանագրի
ՀՀ դրամ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

				Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում են իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում									
	ծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)			Հունվարի	Փետրվարի	Մարտի	Ապրիլի	Մայիսի	Հունիսի	Հուլիսի	Օգոստոսի	Սեպտեմբերի	Ընդամենը
20	30197220	Սեղմակ	Տուփ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
22	30193110	Լրակազմ սեղանի կոմպլեքտանումը	Հատ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
23	30197231	Ֆայլ	Տուփ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
1	30192122	Գրիչ	Հատ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
2	39263200	Գրասենյակային գիրք	Հատ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
3	30192125	Ընդգծիչ	Տուփ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
4	30197622	Թուղթ	կգ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
5	30197235	Թղթապանակ	Հատ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
6	30197234	Թղթապանակ ռեգիստր	Հատ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
7	30197322	Կարիչ	Հատ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
8	30197112	Կարիչի ասեղ	Տուփ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
9	30197111	Կարիչի ասեղ	Տուփ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
10	30192130	Մատիտ	Հատ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
11	30199420	Նշումների թուղթ	Հատ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
12	30192930	Ջնջիչ	Հատ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
13	24911200	Սոսինձ	կգ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
14	22811150	Նոթատետր	հատ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
15	30192111	Շտամպի բարձիկներ	Հատ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
16	30192114	Շտամպի բարձիկի թանաք կապույտ	Հատ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
17	39241210	Մկրատ	Հատ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
18	30197220	Ամրակ	Տուփ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%
19	30197120	Կոճգամ	Տուփ	35%	40%	45%	50%	55%	60%	70%	80%	100%	100%

ԳՆՈՐԴ՝ ՎԱՃԱՌՈՂ՝

“Մեղրու ՏԲԿ” ՓԲԸ
ՀՀ Սյունիքի մարզ,ք. Մեղրի ,Գործարարների 42
Բանկ “ ՎՏԲ Հայաստան Բանկ” ՓԲԸՄեղրու մ/ճ
Հ/Հ 16099-003354200
ՀՎՀՀ 09705024
Էլ.փոստ agarak-hosp@mail.ru
Հեռ. 0286-60685

Տնօրեն ՝ / / Լ.Վարդանյան

Կ.Տ.

Ա/Ձ Աշոտ Բեգլարյան
ՀՀ Մեղրի , Իսահակյան 22Ա
Բանկ ‹‹Հայբիզնեսբանկ›› ՓԲԸ Ագարակի մ/ճ
Հ/Հ 1150019534014044
ՀՎՀՀ 78663815
Էլ.փոստ ashotbeglaryan072@mail.ru
Հեռ. 077-252577

Digitally signed by BEGLARYAN ASHOT 1905730047
Date: 2021.04.05 14:45:10 GMT+04:00

Ա/Ձ Աշոտ Բեգլարյան

Կ.Տ.